ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2016թ. հունիսի 29 N 81-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի առաջարկությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Ապարանի տարածաշրջանի 21-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1)<<Քուչակի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում <<Լուսինե Մարգարյան >>, <<Երջանիկ Գևորգյան>> և <<Գոհար Ալեքսանյան>> բառերը համապատասխանաբար փոխարինել <<Վռամ Աբրահամյան>>, <<Յուրիկ Ներսիսյան>> և <<Սուրեն Ավետիսյան>> բառերով:

Գ. ԳՅՈՌԱԼՅԱՆ